**Արձանագրություն N 3**

«ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով
տպագրական աշխատանքների կատարման գնման գործընթացի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15.06.2018թ.
ժ.10:00

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Ստեփանյան (գնահատող)
Հանձնաժողովի անդամ՝ Աշոտ Քթոյան (գնահատող)
Ոսկի Ֆռանգուլյան (գնահատող)
Արմինե Մարտիրոսյան (բացող)
Պավել Ֆյոդորով (բացող)
Հանձնաժողովի քարտուղար՝ Սևակ Պետրոսյան

## I. Գնահատման արդյունքների մասին

---

(Սարգիս Ստեփանյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից սահմանված ժամկետում ստացվել է համապատասխան եզրակացությունը:

2. Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները <<Հայկարլի>> ՍՊԸ-ի հայտը՝ 7-9-րդ, 13-15-րդ և 22-24-րդ չափաբաժինների համար, <<Միսմա>> ՍՊԸ-ի հայտը՝ 11-րդ և 12-րդ չափաբաժինների համար, <<Յասոն>> ՍՊԸ-ի հայտը՝ 1-6-րդ, 16-21-րդ, 25-րդ և 26-րդ չափաբաժինների համար և Ա/Ձ Արման Ասմանգուլյանի հայտը՝ 10-րդ չափաբաժնի համար գնահատել բավարար և համապատասխանաբար հայտարարել վերջիններիս ընտրված մասնակից:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

3. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

4. Ընտրված մասնակիցներին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

Ս. Ստեփանյան /նախագահ/

Ա. Քթոյան

Ո. Ֆռանգուլյան

Ա. Մարտիրոսյան

Պ. Ֆյոդորով

Ս. Պետրոսյան /քարտուղար/